



REPUBLIC OF ARMENIA  
 KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE  
 МАЯКОВСКИЙ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
 КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
 ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,  
 գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail [mayakovski-1@mail.ru](mailto:mayakovski-1@mail.ru)

N 229  
 31 հոկտեմբերի 2017 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
 ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գուլյան  
 “Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ  
 կետի համաձայն Ձեզ է ներկայացվում 2017 թվականի հոկտեմբեր ամսվա  
 Մայակովսկի համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումների պատճենները.  
 / թիվ 82-Ա, 83-Ա / :

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎՎԱՐ



*[Handwritten signature]*

ԿԱԿԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի, Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  
«16» հոկտեմբերի 2017 թվական N 82-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչ Վարդինե Վարդանյանի դիմումը օգնության մասին և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը. **որոշում եմ՝**

1. Մայակովսկի համայնքի 2017 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Վարդինե Վարդանյանին տալ 60 000 / վաթսուն հազար/ դրամ դրամական օգնություն:

2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :  
Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ. Մայակովսկի  
2017թ. հոկտեմբերի 16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի  
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի, հեռ. 060 28 50 13 E-mail [mayakovski-1@mail.ru](mailto:mayakovski-1@mail.ru)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
«16» հոկտեմբերի 2017 թվական N 83-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, **որոշում եմ.**

1. Քաղաքացի Արթուր Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի 15-րդ փողոց, թիվ 18 հասցեի տնամերձ հողակտորում տալ բնակելի տան վերակառուցման, օժանդակ շինությունների և պարսպապատման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Արթուր Գևորգյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի,

2017թ.հոկտեմբերի 16